ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« »_____ 20 թ. N_____

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Է. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
2017 թվականի սեպտեմբերի 6-ի
N ԳԲԽ-ԷՍ/1/16192-17 գրության

Հարգելի պարոն Սարգսյան,

Հայտնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/31 որոշումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ծանուցել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 6.1) շտկված տարբերակը:

«Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է վերոնշյալ փաստաթուղթը, ինչի վերաբերյալ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊԶԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 4 արձանագրությունը /կցվում է/:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատ. ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման
վարչության պետ՝ Կ. Ավետիսյան
Հեռ. 011 523-685

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 52 37 73, ֆաքս. (374 10) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան, ՀՀ ԳՆ

12. 09. 2017թ.
Ժամը՝ 16:30

Հանձնաժողովի կազմ
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ղուշչյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյան
Ս. Պապյան
Խ. Աբաջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ապերյան

I. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Վ. Ղուշչյան)

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթուղթը /Հավելված 6.1/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

II. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին

(Վ. Ղուշչյան)

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթուղթը և արդյունքում արձանագրվել հետևյալը.

Հավելված N 6.1-ով ներկայացված «տեխնիկական բնութագրերը» աղյուսակում Շրջադարձի շառավիղը ներկայացված է «մ, 5,3», իսկ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «տեխնիկական բնութագիրը» աղյուսակում՝ «մ, 6,0 – 6,9»:

Վերը նշվածի վերաբերյալ Վ. Ղուշչյանի, Ա. Խաչատրյանի և Ս. Պապյանի կողմից տրվեց հետևյալ հիմնավորումը.

Շրջադարձի շառավղի փոքրացումը դրական է՝ բարձրանում է ագրեգատի մանևրունակությունը, ավելանում արտադրողականությունը, նվազում շրջադարձային գոտու լայնությունը, վառելիքի ծախսը և աշխատածախսումները:

2. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

III. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

(Վ. Ղուշչյան)

3.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել որակավորման գնահատման հետևյալ արդյունքները.

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ՝ <<բավարար>>

և ճանաչել ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով,

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը գործընթացը մտնում է անգործության ժամկետի մեջ, որի ավարտից հետո մասնակցին, սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Նախագահ՝ ---------- Վ. Դուշչյան

Անդամներ՝ ---------- Ա. Խաչատրյան

---------- Ս. Պապյան

---------- Խ. Աբաջյան

Քարտուղար՝ ---------- Ա. Ապերյան